



USAID ARMENIA, SOCIAL PROTECTION SYSTEMS
STRENGTHENING PROJECT

ԱՄՆ ՄՁԳ ՀԱՅԱՍՏԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀՁՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Սոցիալական աջակցության մասին օրենսդրությունը և սոցիալական աշխատողների կարգավիճակը Հայաստանում

Կառլ Ուլբրիխտ
Խորհրդատու,
ՄՊՀՀ ԱՄՆ ՄՁԳ,
Բաղադրիչ չորս,

21 ապրիլի 2008թ.

Սույն փաստաթղթում արտահայտված տեսակետների համար պատասխանատվությունը կրում է
հեղինակը, և դրանք անպայմանորեն չեն արտացոլում ԱՄՆ ՄՁԳ-ի կամ ԱՄՆ Կառավարության
դիրքորոշումը:

Ներածություն

Սույն վերլուծության առարկան «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքն է և հարակից օրենսդրությունը, որոնք քննության են առնվում սոցիալական աշխատողների կարգավիճակի տեսանկյունից այն հավաստմամբ, որ սոցիալական աջակցության առանցքային ուղղությունը ոչ թե դրամական օգնության տրամադրումն է, այլ «խնամքի» ծառայություններն իրենց խորհրդատվական, սոցիալական, հոգեբանական և վերականգնողական բոլոր աշխատանքներով: Եվ որպեսզի սոցիալական ծառայությունները զարգանան և բավարարեն երկրի կարիքները, չափազանց կարևոր է օժանդակել այն բանին, որ զարգանա սոցիալական աշխատանքի մասնագիտությունը:

Այլ երկրների սոցիալական աջակցության օրենսդրության վերլուծությունը

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի հետ համեմատություն կատարելու համար ուսումնասիրվել են մերձբալթյան երեք երկրների համապատասխան օրենքները՝ նպատակ ունենալով գնահատել, թե ինչպես կարելի է լավագույնս իրականացնել սոցիալական աջակցությունը և օրենսդրոթեն ամրագրել սոցիալական աշխատողների գործունեությունը:

Լիտվա

Հասկացվում է, որ Հայաստանի օրենքի մշակման ժամանակ առանձնակիորեն հաշվի է առնվել Լիտվայի օրենսդրությունը: Ինչևէ, Լիտվայի գործող օրենքը (որը կոչվում է «Սոցիալական ծառայությունների մասին օրենք») ընդունվել է 2006թ. հունվարի 19-ին: Օրենքը կազմված է հետևյալ 10 բաժիններից.

1. Ընդհանուր դրույթներ: Այստեղ ներառված են սահմանումներն ու ընդհանուր սկզբունքները:
2. Սոցիալական ծառայությունների տեսակները: Սրանք լայն առումով բաժանվում են ընդհանուր սոցիալական ծառայությունների (կամ փոխարենը՝ դրամական նպաստների) և հատուկ սոցիալական ծառայությունների:
3. Սոցիալական ծառայությունների կառավարումը: Սոցիալական ապահովության և աշխատանքի նախարարության խնդիրների շարքին են պատկանում քաղաքականության ձևավորումը, վերլուծությունը, կատարողականության գնահատումը և սոցիալական ծառայությունների ծրագրերի իրականացումը: Ի տարբերություն սրա, տարածքային կառավարման մարմիններն ավելի շատ զբաղվում են ծրագրերի աշխատանքների կառավարմամբ և համակարգմամբ, ինչպես նաև շրջանների մակարդակում սոցիալական ծրարերի մշակմամբ և իրականացմամբ: Տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանատու են տվյալ համայնքի բնակիչների համար նախատեսված սոցիալական ծառայությունների ծրագրման և կազմակերպման համար: Սա ներառում է կարիքների գնահատումը, ֆինանսական ծախսերի հաշվարկումն ու ֆինանսավորման աղբյուրների որոշումը, սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպություններից ծառայությունների ձեռքբերումը,

անհրաժեշտության դեպքում տարածքների տրամադրումն ու սոցիալական ծառայությունների տեղական բաժանմունքների ստեղծումը: Սոցիալական ծառայությունների մոնիտորինգի վարչությունը, որը հանդես է գալիս որպես Սոցիալական ապահովագրության և աշխատանքի նախարարության իրավասու ստորաբաժանում, իրականացնում է սոցիալական ծառայությունների գնահատումը, մոնիտորինգն ու վերահսկողությունը: Սա ներառում է լիցենզիաների տրամադրումը և ընտանիքների կարիքավորության գնահատման և պետական միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացումը:

4. Սոցիալական ծառայությունների տրամադրման մասին որոշման կայացումը: Այս բաժինը վերաբերում է անձանց և ընտանիքների կողմից դիմումների ներկայացման, ինչպես նաև սոցիալական աշխատողների կողմից կարիքավորության գնահատման հարցերին: Անձին կամ ընտանիքին սոցիալական ծառայություններ մատուցելու մասին որոշումը կայացվում է սոցիալական աշխատողի առաջարկության հիման վրա:

5. Սոցիալական ծառայությունների տրամադրումը: Այս բաժնում ավելի մանրամասն սահմանվում են սոցիալական ծառայությունների կոնկրետ նպատակները: Օրինակ՝ տարեցներին մատուցվող սոցիալական ծառայությունների նպատակն է տարեց քաղաքացու համար ստեղծել պայմաններ իր տանը, ընտանիքի հետ ապրելու, ինքնուրույնաբար իր տնային տնտեսությունը հնարավորինս երկար վարելու համար, ինչպես նաև նպաստել ընտանիքի, հարազատների և հասարակության հետ սոցիալական կապերի պահպանմանը:

Բաժնում տրվում է նաև սոցիալական աշխատանքի սահմանումը՝ նախատեսելով, որ սոցիալական աշխատանքը կարող է իրականացվել սոցիալական աշխատողների և նրանց օգնականների կողմից: Սոցիալական աշխատողները պետք է ունենան բարձրագույն կրթություն սոցիալական աշխատանքի «կամ համարժեք կրթության» այլ բնագավառում: Կառավարությունը հաստատում է սոցիալական աշխատողների և նրանց օգնականների որակավորման, ինչպես նաև կատարողականության հաստատման և մասնագիտական որակավորման կատարելագործման հարցերը կարգավորող իրավական ակտերը:

6. Սոցիալական խնամքի հաստատությունների լիցենզավորումը: Այս բաժնում սահմանվում են լիցենզավորման ենթակա սոցիալական խնամքի տարբեր ծառայությունների տեսակները, ինչպես նաև լիցենզավորող մարմինը և լիցենզիաների տրամադրման պայմանները: Նախատեսվում են նաև դրույթներ լիցենզիաների կասցման և չեղյալ ճանաչման վերաբերյալ:

7. Սոցիալական ծառայությունների դիմաց վճարումը: Սոցիալական ծառայությունները տրամադրվում են կարիքավորության գնահատման արդյունքների հիման վրա: Պետական դրամական նպաստներ ստացողներին, ինչպես նաև ցածր եկամուտ ունեցող այլ անձանց սոցիալական ծառայությունները տրամադրվում են անվճար: Մնացած դեպքերում վճարման ենթակա գումարը որոշվում է՝ հաշվի առնելով անձի/ընտանիքի եկամուտը և/կամ ունեցվածքը:

8. Սոցիալական ծառայությունների ֆինանսավորումը: Համայնքների մակարդակում որոշ ծառայություններ ֆինանսավորվում են կենտրոնական կառավարության կողմից համայնքին հատկացված նպատակային դրամական միջոցների հաշվին, մինչդեռ այլ ծառայությունների համար ֆինանսավորման աղբյուր է հանդիսանում ընդհանուր համայնքային բյուջեն:
9. Սոցիալական ծառայություններին առնչվող վիճելի հարցերի կարգավորումը: Կայացված որոշումների դեմ ուղղված բողոքները կարող են ներկայացվել տեղական ինքնակառավարման մարմնին (համայնքային ղեկավարությանը) կամ Սոցիալական ծառայությունների մոնիտորինգի վարչությանը՝ կախված նրանից, թե տվյալ հարցի կարգավորումը ո՞ր մարմնի իրավասությանն է պատկանում: Բողոքարկման հաջորդ ատյանը դատարանն է:

10. Եզրափակիչ դրույթներ

Լատվիա

«Սոցիալական ծառայությունների և սոցիալական աջակցության մասին» օրենքը ընդունվել է 2002թ. նոյեմբերի 19-ին, որից հետո այն մի քանի անգամ փոփոխվել և լրամշակվել է: Սույն վերլուծության մեջ քննության է առնվում օրենքի 2006թ. մայիսի 25-ին հաստատված (ամենավերջին) տարբերակը: Օրենքը կազմված է վեց գլխից և անցումային դրույթներ պարունակող բաժնից: Գլուխները ներառում են հետևյալը.

1. Ընդհանուր դրույթներ: Այստեղ տրվում են սահմանումները, ինչպես նաև օրենքի ընդհանուր նպատակն ու սկզբունքները:
2. Սոցիալական ծառայությունների և սոցիալական աջակցության կազմակերպումը: Այս գլխում սահմանվում են տեղական ինքնակառավարման մարմինների, Սոցիալական ապահովության նախարարության, նախարարության ենթակայության տակ գործող Սոցիալական ծառայությունների պետական գործակալության, սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների պարտականությունները: Տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրն է բացահայտել և գնահատել կարիքները և ծառայություններ մատուցել տվյալ համայնքի տարածքում բնակվող քաղաքացիներին: Ծառայությունները տրամադրվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ստեղծված կազմակերպությունների կամ ծառայություն մատուցող այլ միավորների հետ կնքված պայմանագրերի հիման վրա: Իրենց պարտականությունները կատարելու համար ավելի քան 3000 բնակիչ ունեցող համայնքների կառավարման մարմինները ստեղծում են սոցիալական ծառայությունների կենտրոններ և յուրաքանչյուր 1000 բնակչի համար ունենում մեկ սոցիալական աշխատողի հաստիք:

Պետությունը պատասխանատու է որոշակի սոցիալական ծառայությունների համար, օրինակ՝ հաշմանդամների վերականգնողական ծառայություն: Անհրաժեշտության դեպքում պետությունը ստեղծում է սոցիալական խնամքի և սոցիալական վերականգնողական հաստատություններ: Ինչևէ, նախատեսվում է, որ նշված հաստատությունների ծախսերի ֆինանսավորման պարտականությունը

աստիճանաբար կատանձնեն տեղական ինքնակառավարման մարմինները: Սոցիալական ապահովության նախարարության խնդիրը սահմանափակվում է քաղաքականության մշակմամբ, մոնիտորինգով, սոցիալական ծառայություններ մատուցողների նկատմամբ պահանջների սահմանմամբ և սոցիալական ծառայությունների տրամադրման ուղղությամբ ծախսվող դրամական միջոցների կառավարմամբ: Սոցիալական ծառայությունների պետական գործակալությունը իրականացնում է տրամադրվող սոցիալական ծառայությունների վերլուծությունն ու վերահսկողությունը: Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունները պարտավոր են գրանցվել և հետո միայն զբաղվել սոցիալական ծառայությունների իրականացմամբ:

3. Սոցիալական ծառայությունների նպատակը, տեսակները և դրանցից օգտվելու իրավունք ունեցող անձինք: Այս գլխում սահմանվում է քաղաքացիների այն խմբերի ցանկը, որոնք իրավասու են ստանալու տարբեր տեսակների սոցիալական ծառայություններ, ինչպես նաև տրվում է այդ ծառայությունների բնույթի նկարագրությունը:
4. Սոցիալական երկարատև խնամքի և սոցիալական վերականգնողական հաստատություններում բնակչվող անձանց իրավունքները: Այս գլուխը, ի լրումն որոշակի իրավունքների սահմանմանը, նախատեսում է խնամքի յուրաքանչյուր հաստատությունում սոցիալական խնամքի խորհրդի ստեղծում: Նշված խորհրդի կազմում պետք է ընդգրկվեն տվյալ հաստատությունում ապրող անձանց և նրանց հարազատների, աշխատողների և տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպիչները: Խորհրդի նպատակն է նպաստել հաստատությունում բնակչվող անձանց իրավունքների պաշտպանությանը: Խորհրդի կայացրած որոշումները կրում են խորհրդատվական բնույթ:
5. Սոցիալական աջակցությունը: Այս գլուխը վերաբերում է պետական դրամական նպաստներին, որոնք ենթակա են վճարման տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:
6. Սոցիալական աշխատանքի նպատակը և սոցիալական աշխատանքի մասնագետների նկատմամբ պահանջները: Այս գլխում տրվում է սոցիալական աշխատանքի սահմանումը: Ի լրումն, այստեղ նախատեսվում է, որ «այն անձինք, ովքեր ունեն համապատասխան բարձրագույն մասնագիտական կրթություն կամ որպես երկրորդ մասնագիտություն բարձրագույն կրթություն են ստացել սոցիալական աշխատանքի բնագավառում, իրավունք ունեն զբաղվելու սոցիալական աշխատանքով»: Այն անձինք, ովքեր մատուցում են սոցիալական խնամքի, սոցիալական վերականգնողական և սոցիալական աջակցության ծառայություններ, պետք է համապատասխանաբար ունենան առաջին աստիճանի մասնագիտական կրթություն սոցիալական խնամքի, սոցիալական վերականգնողական կամ սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման բնագավառում:

Հետաքրքրական է, որ ի սկզբանե օրենքը պարունակում էր դրույթներ սոցիալական աշխատանքի մասնագետների ռեեստրի և սոցիալական աշխատանքի

մասնագետների հավաստագրման վերաբերյալ, սակայն հետագայում դրանք չեղյալ ճանաչվեցին: Ի վերջո, այս բաժնում սահմանվում են մասնագետների չորս կատեգորիաների պարտականությունները՝ սոցիալական աշխատողներ, սոցիալական խնամք իրականացնողներ, սոցիալական վերականգնողական ծառայություններ մատուցողներ և սոցիալական աջակցության կազմակերպողներ:

Ըստոնիա

«Սոցիալական ապահովության մասին» օրենքը ընդունվել է 1995թ. փետրվարի 8-ին, սակայն այդ ժամանակից ի վեր այն բազմիցս փոփոխվել է: Ստորև քննության առնվող օրենքի տարբերակն ընդունվել է 2007թ. հունիսի 14-ին: Օրենքը կազմված է 9 գլխից, որոնք ամփոփ ներկայացվում են ստորև:

1. Ընդհանուր դրույթներ: Այստեղ տրվում են սահմանումները, ինչպես նաև օրենքի նպատակը: Սոցիալական աշխատողի սահմանումը հետևյալն է. «բարձրագույն կրթություն ստացած և համապատասխան մասնագիտական ուսուցում անցած անձ»:
2. Սոցիալական ապահովության վարչարարությունը: Սոցիալական հարցերի նախարարության խնդիրները ներառում են քաղաքականության մշակումը, սոցիալական ապահովության ազգային ծրագրերի մշակումը և համակարգումը, սոցիալական ապահովության հաստատությունների և աշխատողների լիցենզավորումը: Տարածքային կառավարման մարմինների պարտականությունները ներառում են քաղաքականության մշակումը, սոցիալական ապահովության ծրագրերի մշակումն ու համակարգումը, սոցիալական ապահովության պետական հաստատությունների կառավարումը, սոցիալական ծառայությունների որակի նկատմամբ հսկողությունը: Տեղական ինքնակառավարման մարմինների պարտականությունները ներառում են սոցիալական ապահովության զարգացման տեղական պլանի մշակումը, սոցիալական ծառայությունների մատուցման աշխատանքների կառավարումը, սոցիալական նպաստների նշանակումն ու վճարումը: Ընդհանուր առմամբ, սոցիալական ծառայությունների փաստացի մատուցման համար պատասխասանտվությունը դրված է տեղական ինքնակառավարման մարմինների ուսերին:
3. Սոցիալական ծառայությունները: Այս գլխում նշվում են սոցիալական ծառայությունների տարբեր տեսակները և տրվում է դրանցից յուրաքանչյուրի սահմանումը՝ միաժամանակ մանրամասնելով այն չափանիշները, որոնք, օրինակ՝ վերաբերում են այն հարցին, թե ի՞նչ պայմաններով և ո՞վ է իրավասու տրամադրելու ծառայությունը, ո՞վ իրավունք ունի օգտվելու ծառայությունից և ինչպե՞ս պետք է ներկայացնել դիմումը (այդ թվում պահանջվող փաստաթղթերը), մրցույթի անցկացման կարգը, ֆինանսավորման դրույթները, աշխատողների վրա տարածվող համապատասխան չափորոշիչները և որակավորման պահանջները:
4. Գործունեության լիցենզավորումը: Այս գլուխը սահմանում է երեխայի խնամքի ծառայությունների համար պահանջվող լիցենզավորման համար ներկայացվող

դիմումի ձևը, դիմումի ներկայացման, լիցենզիայի տրամադրման, գործողության կասեցման և դադարեցման կարգը:

5. Սոցիալական նպաստները: Կարիքավոր և ցածր եկամուտ ունեցող անձանց վճարվող հիմնական դրամական նպաստը կոչվում է «նվազագույն ապրուստի նպաստ»: Այս գլխում սահմանվում են համապատասխանության և կարիքավորության գնահատման չափանիշները, ինչպես նաև վճարման կարգը: Տեղական ինքնակառավարման մարմինները, ըստ իրենց հայեցողության, կարող են վճարել լրացուցիչ սոցիալական նպաստներ, օրինակ՝ խնամող անձանց:
6. Սոցիալական հատուկ կարիքներ ունեցող անձանց պաշտպանությունը: Այս գլխում կարգավորվում են մանկության պաշտպանության, հատկապես խնամքի, ինչպես նաև հաշմանդամների և տարեցների կարիքներին վերաբերող հարցերը: Այստեղ սահմանվում են երեխայի խնամքով և դաստիարակության զբաղվող անձանց նկատմամբ պահանջները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվելիք միջոցառումները:
7. Ընթացակարգը: Ինչպես հուշում է վերնագիրը, այս բաժինը վերաբերում է ընթացակարգային հարցերին, մասնավորապես, դեպքերի կառավարմանը, տեղեկատվության տրամադրմանը և տեղեկատվական համակարգերին, որոշումների կայացման գործընթացներին, ինչպես նաև սոցիալական խնամքի ծառայություն մատուցողների նկատմամբ վերահսկողության և հսկողության իրականացմանը:
8. Սոցիալական ապահովության ֆինանսավորումը և սոցիալական ապահովությանն ուղղված ծախսերը: Ֆինանսավորումն իրականացվում է պետական, տեղական ինքնակառավարման և մասնավոր կամավոր ֆինանսավորման աղբյուրներից: Նախատեսվում են նաև վճարովի սոցիալական ծառայություններ, սակայն դրանց դիմաց գանձվող վճարների և կարիքավորության գնահատման մամրամասներն արտացոլված են առանձին օրենքում:
9. Իրականացման մասին դրույթներ:

Ստորև աղյուսակում անփոփ ներկայացվում են երեք երկրների համապատասխան օրենքներում կարգավորվող հիմնական հարցերը՝ հատուկ շեշտադրում կատարելով սոցիալական աշխատողներին վերաբերող տարրերին:

Աղյուսակ. Մերձբաթյան երկրների օրենսդրությունում արտացոլված հիմնական հարցերը

| Հարց | Լիտվա | Լատվիա | Էստոնիա | Մեկնաբանություններ |
|--|---|--|---|--|
| Օրենքը ներառում է դրույթ դրամական նպաստների մասին: | Ոչ | Այս | Այո | |
| Սոցիալական աշխատողի կրթությունը | Պետք է ունենա բարձրագույն կամ «այլ համարժեք» կրթություն սոցիալական աշխատանքի բնագավառում | «Սոցիալական աշխատանք կարող են իրականացնել այն անձինք, ովքեր որպես երկրորդ մասնագիտություն ստացել են բարձրագույն մասնագիտական կրթություն սոցիալական աշխատանքի բնագավառում» | «Բարձրագույն կրթություն ստացած և համապատասխան մասնագիտական ուսուցում անցած անձինք» | Պարզ երևում է, որ երեք երկրներից երկուսում սոցիալական աշխատանքի բնագավառում բարձրագույն կրթությունը ստանդարտ պահանջ է: |
| Սոցիալական աշխատողի դերը | Հանգուցային դեր են կատարում: Սոցիալական աշխատողները պատասխանատու են կարիքավորության գնահատման համար: Անձին կամ ընտանիքին սոցիալական ծառայություններ տրամադրելու մասին որոշումները կայացվում են սոցիալական աշխատողի առաջարկության հիման | Գործնականում նրանց դերը կարող է չլինել այդքան ծանրակշիռ, որքան Լիտվայում: Սոցիալական աշխատողները պատասխանատու են «սոցիալական վերականգնողական անհատական ծրագրերի» մշակման համար: Օրենքում նշվում է «Լատվիայի Սոցիալական և խնամքի աշխատողների | Սոցիալական աշխատողները ընդգրկվում են օրենքի համաձայն ստեղծվող վերականգնողական թիմերում: Ինչևէ, օրենքից պարզ չէ, թե սոցիալական աշխատողը, ընդհանուր առմամբ, ինչ ծավալի մասնակցություն ունի սոցիալական ծառայություններում: | Կարելի է ասել, որ Լիտվայի օրենքում ավելի մեծ դերակատարում է նախատեսվում սոցիալական աշխատողների համար: Սա, կրթական պահանջների և օրենքում դրամական նպաստների մասին դրույթների բացակայության հանգամանքի հետ մեկտեղ, ենթադրում է, որ |

| | | | | |
|---|--|---|---|--|
| | վրա: | մասնագիտական ընկերակցության» և նրա կողմից ընդունված էթիկայի կանոնների մասին: | | Լիտվայում ավելի մեծ շեշտադրում է արվում զուտ սոցիալական (ալիսինքն՝ ոչ դրամական) ծառայությունների վրա: |
| Սոցիալական աշխատողը տարբե՞ր է նպաստների հարցերով զբաղվող աշխատողից: | Հատուկ տարբերակում չկա, սակայն դրա կարիքն էլ չկա, քանի որ օրենքում չեն ներառված դրամական նպաստների վերաբերող դրույթներ: Օրենքը սահմանում է երկու կատեգորիա՝ սոցիալական աշխատողներ և սոցիալական աշխատողների օգնականներ (վերջիններս սոցիալական աշխատողի հրահանգների համաձայն իրականացնում են սոցիալական աշխատանք): | Այս, առանձնացվում են չորս կատեգորիա՝ սոցիալական աշխատողներ, սոցիալական խնամք իրականացնողներ, սոցիալական վերականգնողական ծառայություններ տրամադրողներ և սոցիալական աջակցության կազմակերպողներ (վերջին կատեգորիային են իրականում պատկանում նպաստների հարցերով զբաղվող աշխատողները): Ինչևէ, նրանք բոլորը պատկանում են «սոցիալական աշխատանքի մասնագետ»-ի ընդհանուր դասին: | Օրենքը տալիս է «սոցիալական ապահովության աշխատող» լայն կատեգորիայի սահմանումը, որը վերաբերում է սոցիալական ծառայությունների կամ ապահովության ողջ ոլորտին, այդ թվում դրամական նպաստների: Այս ընդհանրական կատեգորիայում սոցիալական աշխատողներն ունեն առավել առանձնակի կրթություն և դերակատարություն: | Կարելի է եզրակացնել, որ նպատակահարմար է իրարից տարանջատել սոցիալական աշխատողի և նպաստների հարցերով զբաղվող աշխատողի դերերը և չներառել դրանք մեկ աշխատանքային մեկ կատեգորիայում: Սոցիալական աշխատողներն ունեն հատուկ դերակատարություն՝ իրենց կրթությանը համապատասխան: |
| Սոցիալական աշխատողների | Սոցիալական աշխատողները չեն | Սոցիալական աշխատողները չեն | Օրենքում նշվում է սոցիալական | Հստակորեն երևում է, որ մերձբայթյան |

| | | | | |
|--|--|---|---|--|
| <p>լիցենզավորումը</p> | <p>լիցենզավորվում, սակայն սոցիալական խնամքի կազմակերպությունները ենթակա են լիցենզավորման:</p> | <p>լիցենզավորվում, թեև սկզբնականում օրենքը ներառում էր դրույթներ լիցենզավորման մասին: Սոցիալական ծառայություն մատուցողները (այսինքն՝ կազմակերպությունները) պարտավոր են լիցենզավորվել:</p> | <p>ապահովության աշխատողներին լիցենզավորելու Նախարարության իրավասության մասին, սակայն լրացուցիչ մանրամասներ չեն սահմանվում: Երեխայի խնամքի ծառայությունները ենթակա են լիցենզավորման:</p> | <p>Երկրներում լիցենզավորումը առաջնահերթ հարցերից մեկը չէ:</p> |
| <p>Տեղական ինքնակառավարման մարմինների դերը</p> | <p>Կարիքների գնահատում, ֆինանսական ծախսերի և ֆինանսավորման աղբյուրների բացահայտում, սոցիալական ծառայություններ մատուցողներից ծառայությունների ձեռքբերում, անհրաժեշտության դեպքում տարածքների ապահովում և տեղական սոցիալական ծառայությունների կենտրոնների ստեղծում:</p> | <p>Տեղական ինքնակառավարման մարմինները բացահայտում, գնահատում են կարիքները և ծառայություններ տրամադրում տվյալ համայնքի բնակիչներին: Ծառայությունները տրամադրվում են տեղական ինքնակառավարման մարմնի ստեղծած կազմակերպությունների կողմից կամ ծառայություններ մատուցող այլ կազմակերպությունների հետ կնքվող պայմանագրերի հիման</p> | <p>Պարտականությունները ներառում են սոցիալական ապահովության տեղական զարգացման ծրագրի մշակումը, մատուցվող սոցիալական ծառայությունների կառավարումը, սոցիալական նպաստների նշանակումն ու վճարումը:</p> | <p>Ապակենտրոնացումը հանգեցրել է նրան, որ տեղական ինքնակառավարման մարմինները սկսել են նշանակալից դեր խաղալ մատուցվող ծառայությունների կառավարման մեջ:</p> |

| | | | | |
|--|--|---|---|---|
| | | <p>վրա: Իրենց պարտականությունները կատարելու համար 3000-ից ավելի բնակիչ ունցող համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ստեղծեն սոցիալական ծառայությունների կենտրոններ և յուրաքանչյուր 1000 բնակչի համար ունենան սոցիալական աշխատանքի մեկ մասնագետ:</p> | | |
| <p>Ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունների դերը</p> | <p>Օրենքի դրույթներից հատակորեն երևում է, որ ոչ պետական կազմակերպությունները կարևոր դերակատարում ունեն ծառայությունների մատուցման խնդրում, թեև գնումների գործընթացի առումով նրանք ոչ շահեկան վիճակում են պետական կազմակերպությունների համեմատ:</p> | <p>Ծառայությունների մատուցման գործունեությունը լավ զարգացած է ՀԿ-երի շրջանում: Օրինակ՝ երեխաների ցերեկային խնամքի կենտրոններն ապահովվում են բացառապես ՀԿ-երի կողմից:</p> | <p>Թեև օրենքը հավասար հնարավորություններ է ընձեռում պետական կազմակերպությունների և ՀԿ-երի, ինչպես նաև ֆիզիկական անձանց համար տարբեր տեսակների սոցիալական ծառայությունների մատուցման հարցում, սակայն ՀԿ-երի ներգրավվածության փաստացի մակարդակի մասին տվյալները բացակայում են: Ենթադրվում է, որ այն</p> | <p>Տեղեկատվություն է վերցվել նաև այլ աղբյուրներից, օրինակ՝ երեք երկրներում ՀԿ-երի հատվածի գնահատումները՝ կատարված ԱՄՆ ՄՁԳ-ի կողմից: Ընդհանուր առմամբ, համարյա բոլոր ծառայություններն այժմ տրամադրվում են ՀԿ-երի և տեղական/տարածքային կառավարման մարմինների ենթակայության տակ գործող</p> |

| | | | | |
|--|--|--|--|---------------------------------|
| | | | նման է մերձբալթյան այլ երկներում գրանցված մակարդակին: | կազմակերպությունների կողմից: |
|--|--|--|--|---------------------------------|

Եզրակացնելով՝ վերը համեմատական վերլուծության հիման վրա կարելի է ընդգծել հետևյալ հարցերը.

1. Թեև էական նշանակություն չունի օրենսդրությունում դրամական նպաստները սոցիալական աջակցության այլ ձևերից ամբողջապես առանձնացնելը, սակայն, անշուշտ, այս երկու ոլորտների միջև տարբերակում մտցնելը լավ միտք է, քանի որ այն առնվազն կոյուրինացնի մարդկային ռեսուրսների քաղաքականության իրականացումը:
2. Միանգամայն կարևոր է, որ իրենց սոցիալական աշխատող համարվող ցանկացած անձ ունենա համապատասխան կրթություն և/կամ աշխատանքային փորձառություն: Եթե սոցիալական աշխատանքում բարձրագույն կրթությունը պարտադիր պահանջ չէ, ապա համապատասխան կրթության և աշխատանքային փորձառության համադրման այլընտրանքը (օրինակ՝ մեկ տարի տևողությամբ մասնագիտական դասընթացներին մասնակցության և սոցիալական աշխատանքի ոլորտում առնվազն մեկ տարվա փորձի պահանջը) պետք է էական լինի (ի տարբերություն դրամական նպաստների կառավարմանը): Միջազգային լավագույն փորձը ցույց է տալիս, որ սոցիալական աշխատողի օգնականը պետք է պարբերաբար ուսուցում անցնի գիտելիքներն ու հմտությունները կատարելագործելու համար (թեև, բնականաբար, նրան անհրաժեշտ չէ ունենալ միևնույն մակարդակի կրթություն և/կամ աշխատանքային փորձառություն կամ նույնիսկ բարձրագույն կրթություն): Ավելին, սովորաբար նրա կատարած աշխատանքը միանգամայն տարբեր է նպաստների կառավարումից:
3. Սոցիալական ծառայությունների լիովին կայացած համակարգում շահառուների համապատասխանության մասին հիմնական որոշումները կայացվում են որակյալ սոցիալական աշխատողների կողմից, ովքեր էլ գլխավորապես ընդգրկված են ոչ դրամական ծառայությունների տրամադրման աշխատանքներում:
4. Վերոգրյալից հետևում է, որ սոցիալական աշխատողներն իրականացնում են մի գործառույթ, որը միանգամայն տարբեր է (դրամական) նպաստների հարցերով զբաղվող աշխատողների գործառույթից: Այս երկու գործառույթները մեկ պաշտոնում համադրելը իրատեսական չէ և հակասում է միջազգային լավագույն փորձին:
5. Պետության կողմից սոցիալական աշխատողների լիցենզավորումը և/կամ գրանցումը գերազանց կատարողականության նախապայմաններից մեկը չէ:
6. Միջազգային լավագույն փորձը ցույց է տալիս, որ ոչ դրամական ծառայությունների մեծ մասի տրամադրումը լավագույնս իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների և ՀԿ-երի կողմից:

Սոցիալական աջակցության մասին օրենսդրությունը Հայաստանում

Ներածություն

«Սոցիալական աջակցության մասին» օրենքը («Օրենք»), որն ընդունվել է 2005թ. հոկտեմբերի 24-ին, սահմանում է Հայաստանում սոցիալական աջակցության (Օրենքում՝ նաև սոցիալական ծառայությունների) ոլորտի գործունեության հիմքը: Հետևաբար, Օրենքում սահմանվում են սոցիալական աջակցության տարբեր կատեգորիաները, ինչպես նաև ծառայությունները մատուցող կազմակերպությունների տեսակներն ու նրանց խնդիրները: Օրենքում տրվում է նաև «սոցիալական աշխատանքի» և «սոցիալական աշխատանքի մասնագետի» սահմանումները՝ միաժամանակ նկարագրելով վերջիններիս իրավունքներն ու պարտականությունները:

Օրենքը որպես հիմք է ծառայում, մի կողմից, սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների («ՄՃՏԿ-երի») և, մյուս կողմից, հանրապետության ողջ տարածքում սոցիալական աշխատանք և այլ ձևերի սոցիալական աջակցության ծառայություն իրականացնող տարբեր ՀԿ-երի գործունեության համար:

Սույն փաստաթղթում նախ քննության են առնվում Օրենքին վերաբերող մի շարք կարևոր հարցեր, իսկ այնուհետև առավել մանրամասն վերլուծության են ենթարկվում Օրենքի որոշ հոդվածներ, ինչպես նաև Օրենքի հիման վրա ընդունված ՀՀ Կառավարության մի քանի որոշումներ և Նախարարի հրամաններ: Կարևոր հարցերը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

- Արդյո՞ք ՄՃՏԿ-երը պետք է փորձեն տրամադրել սոցիալական աջակցության բոլոր ծառայությունները, թե՞ նրանք պետք է սահմանափակվեն ընտանեկան նպաստի կառավարման աշխատանքներով՝ սոցիալական աջակցության մնացած տեսակների ծառայությունների մատուցումը պայմանագրային հիմունքով հանձնելով ՀԿ-երին կամ մասնավոր հատվածին:
- Արդյո՞ք սոցիալական աշխատանքի մասնագետներին վերաբերող դրույթները բավարար են, որպեսզի հնարավորություն տան սոցիալական աշխատողներին արդյունավետորեն իրականացնելու գործունեությունը և բարձրացնելու իրենց դերը ոլորտում:
- Արդյո՞ք « սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագիր» հասկացությունը (ինչպես նշվում է Օրենքում, Կառավարության համապատասխան որոշումը և օրինակելի ձևի նախագիծը) իրատեսորեն արտացոլում են հաճախորդների կարիքները:

Հարկ է նշել, որ սույն փաստաթղթում քննության են առնվում նաև սոցիալական աշխատանքի կրթության, սոցիալական աշխատողների էթիկայի կանոնների մշակման մասին դրույթները և սոցիալական աշխատողների համար նախատեսված տնային այցելությունների ուղեցույցի նախագիծը:

Հիմնական հարցերը

ՄԾՏԿ-երի դերը

Գործող Օրենքը չի նախատեսում սոցիալական աջակցության մատուցվող ծառայությունների բաժանում այն առումով, թե ո՞ր տեսակի ծառայությունները պետք է տրամադրվեն պետության, իսկ ո՞ր տեսակի ծառայությունները՝ մասնավոր հատվածի (այդ թվում ՀԿ-երի) կողմից: Անշուշտ, անպայմանորեն չի պահանջվում, որ Օրենքում հստակ տարանջատում կատարվի. նման բաժանումը կարելի է ավելի նպատակահարմարորեն սահմանել քաղաքականության կամ ռազմավարական փաստաթղթի մեջ: Ինչևէ, նշված սահմանման բացակայության պայմաններում Օրենքը կարող է ստեղծել այն տպավորությունը, որ փաստացիորեն սոցիալական բոլոր տեսակի ծառայությունները տրամադրվում են պետության կողմից, մինչդեռ իրականում ՄԾՏԿ-երը գլխավորապես զբաղվում են ընտանեկան նպաստի վարչարարությամբ: Հարկ է նշել, որ բնակչության շրջանում առկա է այն ընկալումը, որ սոցիալական աջակցությունը պարզապես նշանակում է դրամական նպաստներ և ուրիշ ոչինչ:

Գոյություն ունեն երեք հնարավոր տարբերակներ.

1. ՄԾՏԿ-երը հզորանում են և նրանք շատ ավելի մեծ դարակատարում են ունենում սոցիալական աջակցության այլ տեսակների ծառայությունների մատուցման խնդրում: Ինչևէ, այս դեպքում անհրաժեշտ կլինի զարգացնել ՄԾՏԿ-երի կարողությունները, որպեսզի նրանց աշխատակազմում (ավելի) մեծ թիվ կազմեն սոցիալական աշխատանքի որակյալ մասնագետները: Ի լրումն, նպատակահարմար կլիներ յուրաքանչյուր ՄԾՏԿ-ում ապահովել աշխատանքի ներքին բաժանումը, որպեսզի որոշ աշխատակիցներ զբաղվեն ընտանեկան նպաստի վարչարարմամբ, իսկ մյուսները՝ սոցիալական աջակցության այլ տեսակների ծառայություններով: Այդ պարագայում անհրաժեշտ կլինի նաև հստակ տարբերակում կատարել աշխատակիցների կատեգորիաների միջև աշխատանքային պարտականությունների նկարագրությունների (աշխատանքի պաշտոնների) առումով: Նրանք, ովքեր զբաղվում են ընտանեկան նպաստների վարչարարմամբ, իրականացնում են ստուգումներ և գրասենյակային աշխատողի գործառնություններ և հետևաբար, պետք է կոչվեն «նպաստների հարցերով զբաղվող աշխատողներ»: Սա այն ուղղությունն է, որն, անշուշտ, չի մտնում սոցիալական աշխատողի, կամ նույնիսկ սոցիալական աշխատողի օգնականի, հիմնական գործառնությունների մեջ: Սա կարելի է ամրագրել Օրենքում՝ սահմանելով, որ «նպաստների հարցերով զբաղվող աշխատողը» դասվում է սոցիալական աշխատանքի մասնագետի երրորդ կատեգորիայի կամ, ավելի ստույգ, բոլորովին առանձին կատեգորիայի շարքին:
2. Տրվում է ՄԾՏԿ-երի դերի ավելի նեղ սահմանումը, որպեսզի նշված կենտրոնները համարյա լիովին կենտրոնացնեն իրենց գործունեությունը ընտանեկան կամ այլ դրամական նպաստների ուղղությամբ՝ բացառելով սոցիալական աջակցության այլ տեսակների ծառայությունները: Հետևաբար, վերջիններս համարյա ամբողջովին կտրամադրվեն մասնավոր հատվածի կողմից: Դրա համար անհրաժեշտ է արմատավորել նշված ծառայությունների մատուցումը պայմանագրային հիմունքով ՀԿ-երին և մասնավոր հատվածի այլ կազմակերպություններին հանձնելու պրակտիկան: Հարկ է կրկին անգամ նշել, որ ՄԾՏԿ-երի աշխատակիցները պետք է լինեն նպաստների հարցերով զբաղվող աշխատողներ և

շատ քիչ չափով կատարեն կամ ընդհանրապես չկատարեն սոցիալական աշխատողի գործառույթներ և սա, ինչպես նշվում է վերը 1-ին կետում, պետք է ամրագրվի Օրենքում:

3. Երրորդ տարբերակը ենթադրում է «status quo»-ի պահպանում: Ինչևէ, ակնհայտ է, որ այս տարբերակը անբավարար է, որովհետև նպատակահարմար չէ միևնույն աշխատակցի գործառույթներում համադրել նպաստների հարցերով զբաղվող աշխատողի և սոցիալական աշխատանքի մասնագետի պարտականությունները:

Սոցիալական աշխատանքի մասնագետների իրավունքներն ու պարտականությունները
Այս բաժնում քննության են առնվում հինգ հիմնական ենթահարցեր: Դրանք են.

- Էթիկայի նորմերը:
- ՀԿ-ը / ազգային ընկերակցություն:
- Հաճախորդի անունից հանդես գալը:
- «Նպաստների հարցերով զբաղվող աշխատողի» մասին դրույթ ներառելու դեպքում Օրենքում նախատեսված խնդիրների վերանայումը:
- Երեխաների և տարեցների սոցիալական աջակցության ծառայությունների ոլորտների տարանջատումը:

1. Սոցիալական աշխատողների էթիկայի կանոնները

«Սոցիալական աջակցության մասին» օրենքի 16-րդ հոդվածում նախատեսվում է, որ ԱՍՀՆ-ը հաստատում է սոցիալական աշխատանքի մասնագետների էթիկայի կանոնները: Ներկայումս, ինչևէ, էթիկայի կանոններ դեռևս ընդունված չեն, և ԱՍՀՆ-ը դիմել է մեզ գոյություն ունեցող նախագծերը և տարբերակները ուսումնասիրելու խնդրանքով:

Էթիկայի կանոնների համար լավագույն տարբերակի որոշման համար ուսումնասիրվել են հետևյալ փաստաթղթերը.

- ԱՍՀՆ-ի անունից «APSREP» ծրագրի կողմից մշակված «Տնային այցելություններ կատարող սոցիալական աշխատողների ուղեցույց»-ի 4-րդ բաժինը, որի վերանագիրն է՝ «Մասնագիտական արժեքները և էթիկայի նորմերը»:
- Անգլիայում և Շոտլանդիայում սոցիալական աշխատողների գործելակերպի կանոնները (այս երկու երկրներում կանոնները համարյա նույնական են):
- Ներկայումս «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի կողմից կիրառվող «Սոցիալական աշխատանքի կոդեքսը» և «Էթիկայի կոդեքսը»:
- «Հայաստանի կառավարության աշխատողների միություն» ՀԿ-ի («ՀԿԱՄ») կողմից մշակված էթիկայի կանոնների նախագիծը, որը հավելվածի տեսքով կցված է «Տնային այցելություններ կատարող սոցիալական աշխատողների ուղեցույց»-ին:
- 2002թ. հուլիսի 11-ին Քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից հաստատված «Քաղաքացիական ծառայողների էթիկայի կանոնները»:

«Տնային այցելություններ կատարող սոցիալական աշխատողների ուղեցույց»-ի 4-րդ բաժնում 8 համառոտ պարբերությունների տեսքով հստակորեն սահմանվում են հիմնական ուղեցույցները, որոնք կարելի է ամփոփի ներկայացնել հետևյալ կերպ.

1. Յուրաքանչյուր հաճախորդի նկատմամբ ցուցաբերել անհատական վերաբերմունք:

2. Առանց որևէ խտրականության բոլոր հաճախորդներին ցուցաբերել հավասար վերաբերմունք:
3. Չդատել, չքննադատել կամ չարդարացնել հաճախորդին:
4. Ընթրնումով մոտենալ հաճախորդին, սակայն զերծ մնալ հուզական վերաբերմունքից:
5. Բոլոր հաճախորդների համար ապահովել հավասար հնարավորություններ:
6. Օգնել հաճախորդին՝ ինքն իրեն օգնելու, այսինքն՝ սեփական որոշումներ կայացնելու, անձնական ունակությունները բարելավելու / կատարելագործելու նպատակով:
7. Հաճախորդին տալ ընտրության հնարավորություն, այսինքն՝ տրամադրել տեղեկատվություն ծառայությունների մասին, որպեսզի հաճախորդը դրա հիման վրա կարողանա որոշում կայացնել:
8. Պահպանել հաճախորդին վերաբերող տեղեկությունների գաղտնիությունը:

«Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի կողմից կիրառվող կանոնների երկու ժողովածուներում արտացոլված են այս նույն սկզբունքներից շատերը: Այնուամենայնիվ, դրանք չեն կարող ծառայել որպես հարմար օրինակներ, քանի որ դրանց տեքստը հղկված չէ, և միշտ չէ, որ նպատակներն այնտեղ հստակորեն են ձևակերպված:

ՀԿԱՄ-ի կողմից մշակված կանոնները ծավալուն են և մանրամասն: Փաստաթուղթը կազմված է 12 էջից և պարունակում է բազաթիվ կրկնություններ: Կառուցվածքը և ներառված թեմաները լիովին չեն բխում փաստաթղթի նպատակից: Ավելին, գլխի վերնագրերում նշվող թեմաներին հաջորդող տեքստային մասը միշտ չէ, որ իր փաստացի բավանդակությամբ համապատասխանում է վերնագրին: Օգտագործվում է բավականին վերամբարձ լեզու: Ինչևէ, փաստաթղթի նախագիծը, որը կցված է ուղեցույցին, քննարկվել և հավանության է արժանացել «ԱՄՀՆ-ՀԿ-եր» համաժողովում 2006 թվականին, և հիմնավոր պատճառներ կան այն որպես սկզբնական օգտագործելու համար:

Քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից հաստատված կանոններն, իհարկե, իրենց գործողության շրջանակների առումով ավելի ընդհանրական են, և տեղին է առաջարկել, որ դրանք տարածվեն մարզպետարանների ենթակայության տակ գործող սոցիալական ծառայության կենտրոնների աշխատակիցների վրա: Կանոններն ավելի հակիրճ են և մեղմ, քան կարելի էր ակնկալել: Ինչևէ, շարադրանքի հստակության առումով դրանք ծառայում են որպես լավ օրինակ:

Անգլիայի և Շոտլանդիայի գործելակերպի կանոնները սահմանում են սոցիալական աշխատողների համար նախատեսված վեց հիմնական կանոն: Յուրաքանչյուր կանոն ներառում է մեկ նախադասությունից կազմված և հստակորեն ձևակերպված պարզ դրույթներ: Վեց հիմնական կանոնները կարելի է ամփոփ ներկայացնել հետևյալ կերպ.

1. Պաշտպանել ծառայություններից օգտվողների և խնամք իրականացնողների իրավունքները և խթանել նրանց շահերը:
2. Ձգտել ձեռք բերել և պահպանել ծառայություններից օգտվողների և խնամք իրականացնողների հավատն ու վստահությունը:
3. Խթանել ծառայություններից օգտվողների ինքնուրույնությունը՝ միևնույն ժամանակ հնարավորինս պաշտպանելով նրանց վտանգից կամ վնասից:

4. Հարգել ծառայություններից օգտվողներից իրավունքները՝ միևնույն ժամանակ ջանալով ապահովել այն, որ նրանց վարքագիծը չվնասի սեփական անձին և մյուսներին:
5. Պահպանել հանրության հավատն ու վստահությունը սոցիալական ծառայությունների նկատմամբ:
6. Հաշվետու լինել սեփական աշխատանքի որակի համար և պատասխանատվություն կրել սեփական գիտելիքներն ու հմտությունները պահպանելու և կատարելագործելու համար:

Հետաքրքրական է, որ ի տարբերություն այլ կանոնների, այստեղ զգալի ուշադրություն է դարձվում խնամք իրականացնողների, ինչպես նաև հաճախորդների շահերի վրա: Սոցիալական աշխատողների գործելակերպի կանոններից բացի, սահմանված են առանձին կանոններ սոցիալական աշխատողների գործատուների համար:

Եզրակացնելով՝ կարելի է ասել, որ ուղեցույցում ներառված կանոնների նախագիծը, որ մշակվել է ԱՄՀՆ-ի հետ համատեղ և արդեն ստացել շահագրգիռ կողմերի հավանությունը, պետք է օգտագործվի որպես հիմք վերջնական տարբերակի կազմման համար: Համապատասխանաբար, մեր ծրագիրը կազմել է կանոնների լրամշակված տարբերակը, որը կից ներկայացվում է սույն փաստաթղթին:

2. ՀԿ-ը / ազգային ընկերակցությունը

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ երկարաժամկետ հատվածում սոցիալական աշխատանքի մասնագետության զարգացումը լավագույնս ապահովվում է ազգային ընկերակցության միջոցով, որը սովորաբար ունի ՀԿ-ի կարգավիճակ: Նշված ընկերակցությունները կարող են զբաղվել, ի թիվս այլ ուղղությունների, ուսուցմամբ և էթիկայի նորմերի սահմանմամբ, այդ թվում էթիկայի կանոնների խախտման դեպքում ընկերակցության անդամների նկատմամբ պատժամիջոցների կիրառմամբ: Ընկերակցությունում անդամակցությունը իրականում հանդիսանում է գրանցման ձևերից մեկը: Որոշ երկրներում լիցենզավորումն իրականացվում է ազգային ընկերակցության կողմից:

Հավանաբար կպահանջվի մի քանի տարի, մինչև Հայաստանում կձևավորվի այն միասնական ՀԿ-ը, որը հանդես կգա որպես ազգային ընկերակցություն և ի վիճակի կլինի կատարելու վերոնշյալ խնդիրները: Այս զարգացումը պետք է տեղի ունենա բնականորեն, և, հավանաբար, ոչ՝ օրենքով ամրագրման միջոցով: Ինչևէ, Հայաստանի Կառավարության և առկա ՀԿ-երի և կրթական հաստատությունների հետ երկխոսության շարունակումը կարող է խթան հանդիսանալ այս հարցերի շուրջ քննարկումների համար և արագացնել զարգացման գործընթացը:

3. Հաճախորդի անունից հանդես գալը

Շահագրգիռ կողմերի հետ անցկացված քննարկումները ցույց են տվել, որ սոցիալական աշխատողները, հատկապես նրանք, ովքեր աշխատում են ՀԿ-երում, իրենց հաճախորդների անունից վարչական հարցերի լուծման ժամանակ հաճախ կանգնում են խնդիրների առջև: Սոցիալական աշխատողը կարող է հանդես գալ որպես իր հաճախորդի ներկայացուցիչ, եթե վերջինս ունի ֆիզիկական կամ հոգեկան հիվանդություն կամ որևէ այլ պատճառով ի վիճակի չէ հարցի կարգավորման համար դիմելու համապատասխան

ատյանին անձամբ: Մինչդեռ երբ սոցիալական աշխատողը փորձում է պետական համապատասխան մարմիններին (օրինակ՝ ՍԾՏԿ-երին և այլն) դիմելու միջոցով հաճախորդի անունից միջամտել, հաճախ նրան տրվում է հետևյալ հարցը. «Արդյո՞ք սոցիալական աշխատողն ունի անձին ներկայացնելու լիազորություն»: Հայաստանի օրենսդրության համաձայն, նման հարցերը կարգավորվում են լիազորագրի շնորհման միջոցով, որը նոտարի կողմից վավերացվելուց հետո ճանաչվում է որպես հավաստիացում այն մասին, որ անձը լիազորել է սոցիալական աշխատողին հանդես գալու իր անունից: Ինչևէ, լիազորագրի ստացումը վարչական և ֆինանսական բեռ է, հատկապես սոցիալական խոցելի հաճախորդների համար: Լիազորագրի այլընտրանքային պարզտարբերակը կարող է լինել հաճախորդի կողմից կազմվող լիազորման գրությունը: Ճիշտ է, մեծամասամբ սա միանգամայն ընդունելի է, սակայն այստեղ, իրոք, առաջանում է կեղծիքի ռիսկը (գրության կամ ստորագրության կեղծում, հաճախորդի նկատմամբ պարտադրանքի կիրառում, թյուր մեկնաբնություն և այլն): Եվ չկա հիմնավոր պատճառ այն հարցում, թե ինչու սոցիալական աշխատողները պետք է ազատվեն լիազորագիր ձեռք բերելու պարտականությունից, երբ իրավաբաններից, օրինակ, մշտապես պահանջվում է ներկայացնել լիազորագիր ի հավաստումն նրա, որ հաճախորդը վերջինիս լիազորել է հանդես գալու իր անունից:

4. Վերանայել Օրենքում նախատեսված խնդիրները «նպաստների հարցերով զբաղվող աշխատողի» մասին դրույթ ներառելու դեպքում
Եթե վերը նշվող առաջարկության համաձայն Օրենքը փոփոխվի՝ արտացոլելով սոցիալական աշխատանքի մասնագետների և նպաստների հարցերով զբաղվող աշխատողների միջև տարանջատումը, ապա այդ դեպքում անհրաժեշտություն կառաջանա վերանայելու գործող Օրենքի հոդված 33-ում սահմանվող իրավունքների և պարտականությունների ցանկը: Թվում է, որ նշված հոդվածի դրույթների կազմման ժամանակ հաշվի է առնվել այն հանգամանքը, որ սոցիալական աշխատանքի մասնագետները պետք է զբաղվեն ընտանեկան նպաստների վարչարարմամբ, ինչպես նաև սոցիալական աշխատանքով:

5. Իրարից տարանջատել երեխաների և տարեցների սոցիալական աջակցության ծառայությունների ոլորտները
Միջազգային լավագույն փորձը ցույց է տալիս, որ սոցիալական աշխատանքի մասնագետների ենթակատեգորիաների բաժանումն արված է և՛ հորիզոնական, և՛ ուղղահայաց կտրվածքներով: Այլ կերպ ասած՝ գոյություն ունեն ոչ թե պարզապես «սոցիալական աշխատողներ» և «սոցիալական աշխատողների օգնականներ», այլ նաև նեղ մասնագիտացումներ, ինչպիսիք են կրթական սոցիալական աշխատողներ, տարեցների հետ աշխատող կամ երեխայի պաշտպանության հարցերով զբաղվող մասնագետներ: Օրենքի ցանկացած փոփոխություն կատարելիս անհրաժեշտ է հաշվի առնել այս հանգամանքը. սխալ կլինի ստեղծել այն տպավորությունը, որ սոցիալական աշխատանքի տարբեր տեսակների միակ հիմնավոր բաժանումը ուղղահայաց բաժանումն է:

Սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագիրը

Ինչպես ավելի մանրամասն քննարկվում է ստորև, Օրենքով նախատեսվում են սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրեր այն ակնհայտ մտադրությամբ, որ ապահովվի քաղաքացիների գնահատումը առկա պետական

ծառայությունների ողջ շարքից օգտվելու տեսանկյունից: Ինչևէ, հոգեբանի կամ սոցիալական աշխատողի կողմից խորհրդատվության տրամադրման հանգուցային հարցը դուրս է մնացել ծրագրի շրջանակներից: Փոխարենը, և Կառավարության համապատասխան որոշումը, և օրինակելի ձևի նախագիծը պարզապես արտացոլում են պետության կողմից տրամադրվող ծառայությունների ծավալուն ցանկը: Սա ամենևին չի համապատասխանում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների համար նախատեսվող սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրի օրինակելի ձևին, որտեղ հստակորեն սահմանվում է հոգեբանական, ինչպես նաև սոցիալական, բժշկական և կրթական օժանդակությունը:

Օրենքի առանձին հոդվածների վերլուծությունը

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սոցիալական աջակցությունը սահմանվում է որպես «սոցիալական ծառայությունների ամբողջություն»: Ինչևէ, չի տրվում «սոցիալական ծառայություններ» հասկացության հստակ նկարագրությունը:

«Սոցիալական աջակցություն» հասկացության սահմանման և «սոցիալական աջակցության նպատակը» սահմանող հոդված 4-ի միջև կրկնություն կա:

Առաջարկվում է Օրենքում օգտագործել հետևյալ տերմինները.

- «սոցիալական աջակցությունը» ընդհանուր տերմինն է, որը վերաբերում է.
 - և՛ սոցիալական ծառայություններին (այսինքն՝ ոչ դրամական ծառայություններին),
 - և՛ դրամական նպաստներին:

«Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմին» և «սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություն» երկու սահմանումներում էլ հղում է արվում «սոցիալական աջակցության» տրամադրմանը: Ինչևէ, սոցիալական աջակցությունը սահմանվում է որպես սոցիալական ծառայությունների ամբողջություն: Սրանից հետևում է, որ եթե կազմակերպությունը տրամադրում է միայն մեկ սոցիալական ծառայություն, ապա այն չի տրամադրում սոցիալական ծառայությունների ամբողջությունը և, հետևաբար, գործող սահմանումների համաձայն այն չի ճանաչվի որպես սոցիալական ծառայություն տրամադրող:

Հոդված 5. Սոցիալական աջակցության կազմակերպման եւ տրամադրման սկզբունքները

Պարբերություն 1-ում նշվում է, որ սոցիալական ծառայություններ տրամադրելիս նախապատվությունը տրվում է երեխաներին: Արդյո՞ք սա հիմնվում է որևէ ազգային քաղաքականության վրա:

Պարբերություն 2-ում նշվում է հետևյալը. «սոցիալական ծառայությունների տրամադրումը իսկապես դրա կարիքն ունեցող անձին»: Որևէ այլ օրենքում տրվո՞ւմ է «իսկապես կարիք ունեցող անձի» սահմանումը:

Պարբերություններ 5-ը («շարունակականությունը») և 8-ը («սոցիալական աջակցությունից շարունակական կախվածության բացառումը») հակասում են միյանց և կարիք ունեն վերաձևակերպման:

Հոդված 7. Սոցիալական ծառայությունների հիմնական տեսակները

Համաձայն «սոցիալական աջակցություն», «սոցիալական ծառայություններ» և «դրամական նպաստներ» հասկացությունների միջև առաջարկվող տարբերակման, հոդված 7-ի կետ 3-ը («դրամական օգնության տրամադրում») պետք է հանվի Օրենքի գլուխ 2-ից: Դրամական նպաստը պետք է դիտվի որպես սոցիալական աջակցության առանձին տեսակ:

Պարբերություն 5-ում նախատեսվում է «Ժամանակավոր օթևանի տրամադրում» մասին, սակայն չի նշվում մշտական օթևանի մասին: Ինչևէ, կարելի է ենթադրել, որ տարեցների տուն-ինտերնատները տրամադրում են մշտական օթևան:

Հոդվածներ 7-14-ը սահմանում են սոցիալական ծառայությունները տեսակներն ու ձևերը: Հետաքրքրական է, որ ինքնին օրենքի որևէ այլ դրույթում չի նախատեսվում որոշակի մակարդակի ծառայություն տրամադրելու հատուկ պարտավորություն:

Հոդված 9. Վերականգնողական օգնության տրամադրումը

Այս հոդվածում տրվում է վերականգնողական օգնության մի շարք տեսակների ցանկը: Նախատեսվում է, որ վերականգնողական օգնության տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Համապատասխան որոշումը թիվ 1369-Ն է, որն ընդունվել է 2006թ. սեպտեմբերի 22-ին: Եվ օրենքում, և որոշման մեջ խոսվում է սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրերի մասին, և իրականում ԱՍՀՆ-ը նույնպես մշակել է սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրի օրինակելի ձևը: Նշված ձևը և կանոնակարգերը վերաբերում են դրամական և այլ օգնության տարբեր ձևերին, որոնք ամրագրված են գործող օրենքներում և կանոնակարգերում: Դրանք են.

- Կենսաթոշակները
- ՉԾՊԳ-ի ծառայությունները
- Տնային խնամքը
- Հատուկ կրթությունը
- Ֆինանսական արտոնությունները
- Անվճար բժշկական օգնությունը
- Պրոթեզների տրամադրումը [օր.՝ արհեստական վերջույթներ]
- Ընտանեկան նպաստները
- Բնախրեղեն նպաստները
- Ծնողագուրկ երեխաներին բնակարաններով ապահովումը
- Փախստականներին բնակարաններով ապահովումը
- Հաշմանդամության վերականգնողական ծրագիրը (բժշկա-սոցիալական փորձաքննության հանձնաժողովը):

Ինչևէ, հետաքրքրական է, որ մեկ կարևոր հարց, այն է՝ հոգեբանական վերականգնողական ծրագիրը, նշվում է օրենքում, սակայն լիովին չի արտացոլված ենթաօրենսդրական ակտերում կամ օրինակելի ձևի նախագծում: Այլ կերպ ասած, հոգեբանական օգնություն ստանալու իրավունքը, որը տեսականորեն գոյություն ունի

օրենքում, անկախ ցանկացած այլ ձևի սոցիալական աջակցություն ստանալու իրավունքից, գործնականում ամրագրված չէ ենթաօրենսդրական ակտերում և հավանաբար իրականում հասանելի է միայն երեխաների և հաշմանդամների համար:

Օրինակելի ձևի նախագիծը, որտեղ նշվում են վերը օգնության բոլոր տեսակները, թողնում է այն տպավորությունը, որ այն իրենից ներկայացնում է պետական աջակցության բոլոր հնարավոր ձևերի մի ցանկ, որից կարող է օգտվել անհատը: Ինչևէ, հնարավոր է, որ իրականում ձևն արդյունավետորեն չօգտագործվի: Ձևի առումով առանձնակի այլ վերապահումները վերաբերում են հետևյալ հարցերին.

- Այնտեղ չի նշվում այն մասին, որ վերականգնողական ծրագիրը պետք է ունենա ընդհանուր ժամանակացույց:
- Այնտեղ որևէ գործողություն չի ակնկալվում ինքնին հաճախորդի կողմից. վերջինիս վերապահվում է չափազանց պասիվ դիրք, և այս պասիվությունը, անկասկած, կխոչընդոտի ցանկացած իրական վերականգմանը:
- Ձևը կազմված է շուրջ 6 էջից, սակայն իրականում կոնկրետ հաճախորդի համար նախատեսվող համապատասխան ծառայությունները կարող են թվով շատ սահմանափակ լինել: Այս իսկ պատճառով բոլոր ծառայությունների թվարկումը անտեղի թղթաբանություն է: Ծառայությունների ցանկը ձևիվ հանելու դեպքում փաստաթղթի ծավալը շատ ավելի կկրճատվի: Հաճախորդի կարիքների գնահատում կատարելու ժամանակ սոցիալական աշխատողը կարող է պարզապես նրան տեղեկացնել ծառայությունների առանձին ցանկի մասին և այնուհետև ձևում հատկացված շատ ավելի փոքր տեղում նշել այն ծառայությունները, որոնք կոչված են օգնելու հենց տվյալ հաճախորդին:

Հոդված 14. Իրավաբանական օգնության տրամադրումը

Հետաքրքրական է, որ այս հոդվածի սկզբնական տարբերակում նախատեսվում էր, որ իրավաբանական օգնության կազմակերպման կարգը պետք է հաստատվի կառավարության որոշումով: Հետագայում կառավարության որոշման մասին այս պահանջը հանվեց խորհրդարանի կողմից օրենքի վերջնական ընդունման ժամանակ հավանաբար այն պատճառով, որ հարցը կարգավորվում է առանձին օրենքով: Ներկայումս անվճար իրավաբանական պաշտպանությունը (շահերի ներկայացումը դատարանում) մեծապես սահմանափակվում է քրեական գործերով և ֆինանսավորվում է պետության կողմից Փաստաբանների միության միջոցով: Սա նշանակում է, որ պետական ֆինանսավորում նախատեսված չէ այնպիսի իրավիճակներում, որտեղ, օրինակ՝ անձը խոչընդոտների է հանդիպում ընտանեկան նպաստ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ձեռք բերման խնդրում:

Հոդված 16

Պարբերություն 3-ը, անշուշտ, պետք է վերաբերի միայն պետական հատվածի մարմիններին: ԱՍՀՆ-ը (կամ ընդհանրապես, պետությունը) իրավասու է իրականացնելու սոցիալական ծառայություններ մատուցող մասնավոր կազմակերպությունների մեթոդական ղեկավարումը միայն պարտադիր պահանջներ սահմանող իրավական ակտերի միջոցով:

Հարց է ծագում, թե արդյո՞ք պարբերություն 6-ը տեղին է: Ենթադրաբար, իր կանոնադրության համաձայն Նախարարությունն իրավունք ունի կազմակերպելու

ուսուցողական ներքին դասընթացներ (այսինքն՝ սեփական աշխատողների և սոցիալական աջակցության համակարգում զբաղված պետական այլ աշխատողների համար): Ինչևէ, Նախարարությունը կրթական հաստատություն չէ և չպետք է կազմակերպի ուսուցում և դասընթացներ՝ ընդհանրապես նախատեսված սոցիալական աշխատանքի մասնագետների համար:

Պարբերություն 12. ԱՍՀՆ-ը «սահմանում է սոցիալական ծառայությունների որակի վերահսկման հետադարձ կապի մեխանիզմները»: Որպես այդպիսին կարիք չկա սա ամրագրել օրենսդրական ակտում: Փոխարենը, պետք է լինի գրավոր քաղաքականություն:

Հոդված 31

Սոցիալական աշխատանքի տվյալ սահմանումը ծառայում է օրենքի նպատակին, որը գլխավորապես կոչված է կարգավորելու կոնկրետ տեսակների սոցիալական աջակցության ծառայությունները: Ինչևէ, ամբողջովին վերցված, սոցիալական աշխատանքը ավելի լայն մասնագիտական ոլորտ է, որը վերաբերում է ոչ միայն անձանց և ընտանքներին, այլ նաև համայնքներին և ինքնին հասարակությանը: Ավելին, այն տեսական, ինչպես նաև կիրառական գիտելիքների բնագավառ է: Հետևաբար, կան օրենքում պետք է վերաձևակերպվի սահմանումը, նշելով. «Սույն օրենքի նպատակի համար սոցիալական աշխատանքը սահմանվում է որպես...», կան էլ պետք է կիրառվի միջազգային փորձին համահունչ, ավելի հղկված սահմանումը: Ստորև որպես օրինակ բերվում է Լատվիայի «Սոցիալական ծառայությունների և սոցիալական աջակցության մասին» օրենքում տրվող սահմանումը.

«Մասնագիտական գործունեություն, որն օգնում է անձին, ընտանիքին, անձանց խմբերին և, ընդհանրապես, ողջ հասարակությանը զարգացնելու կամ վերականգնելու սոցիալապես գործելու իրենց ունակությունը, ինչպես նաև ստեղծելու նպաստավոր պայմաններ նման գործունեության համար»:

Հոդված 32

Միջազգային լավագույն փորձին համապատասխան (և ինչպես առաջարկվում է սույն փաստաթղթում), պետք է խստացվեն սոցիալական աշխատանքի մասնագետների և հատկապես «սոցիալական ծառայողների» նկատմամբ կրթական և աշխատանքային փորձառության պահանջները:

ԱՍՀՆ-ի 2007թ. փետրվարի 9-ի «Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կենտրոնների օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 32 որոշման վերլուծությունը

Օրենքի հոդված 16-ի համաձայն, նախատեսվում է սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների օրինակելի կանոնադրության հաստատում: Իրականում հրամանի առանձին հավելվածների տեսքով հաստատվում են սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների երկու օրինակելի կանոնադրություններ: Առաջին օրինակելի կանոնադրությունը նախատեսված է այն կենտրոնների համար, որոնք գործում են մարզպետարանների ենթակայության տակ: Երկրորդ օրինակելի կանոնադրությունը նախատեսված է տեղական ինքնակառավարման մարմինների

Ենթակայության տակ գործող կենտրոնների համար: Հարկ է նշել, որ տարածքային կենտրոնների ընդհանուր թիվը 55 է, որոնցից 38-ը գտնվում են մարզպետարանների, իսկ 17-ը՝ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության տակ (Երևանի խորհուրդները՝ գումարած Գյումրիի, Արարատի, Ջերմուկի և Վանաձորի խորհուրդները): Աշխատողների թվի առումով բաշխվածությունն ավելի համաչափ է. մարզպետարանների կազմում գործող կենտրոններն ունեն 319 քաղծառայող, իսկ համայնքներում աշխատակիցների թիվը 230 է:

Երկու դեպքում էլ կենտրոնների գործունեության վրա տարածվում է «Սոցիալական աջակցության մասին» օրենքը, որը սահմանում է սոցիալական աջակցության տեսակները:

Տեսականորեն տարածքային կենտրոնները տրամադրում են բոլոր տեսակների սոցիալական աջակցության ծառայություններ, սակայն գործնականում նրանք հիմնականում զբաղվում են ընտանեկան նպաստի համակարգի կառավարմամբ: Սրա մասին են վկայում տվյալ հարցի շուրջ անցկացված քննարկումները, ինչպես նաև օրինակելի կանոնադրություններում սահմանվող տարածքային կենտրոնների աշխատողների իրավունքներն ու պարտականությունները:

Երկու օրինակելի կանոնադրություններն ունեն միևնույն ընդհանուր կառուցվածքը, անկախ նրանից, թե սոցիալական ծառայության վարչությունը գործում է մարզպետարանի, թե՞ տեղական ինքնակառավարման մարմնի կազմում: Ինչևէ, հարկ է նշել, որ տեղական ինքնակառավարման մարմնի ենթակայության տակ գործող վարչությունների համար նախատեսվող կանոնադրությունը բաղկացած է ընդամենը 6 բաժնից, քանի որ վարչության գործունեության կազմակերպման հարցը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով: Բաժինները հետևյալն են.

- I. Ընդհանուր դրույթներ
- II. Գործալակության / վարչության նպատակն ու խնդիրները
- III. Գործալակության / վարչության գործառույթները
- IV. Գործալակության / վարչության ղեկավարությունը
- V. Գործակալության քաղծառայողների / վարչության աշխատակիցների գիտելիքներն ու հմտությունները
- VI. Գործակալության քաղծառայողների / վարչության աշխատակիցների իրավունքներն ու պարտականությունները
- VII. Գործակալության գործունեության կազմակերպումը / [կանոնադրության մեջ չի ներառված համապատասխան բաժին տեղական ինքնակառավարման մարմնի սոցիալական ծառայության վարչության գործունեության վերաբերյալ]:

Ստորև ներկայացվող վերլուծությունը գլխավորապես հիմնվում է մարզպետարանների ենթակայության տակ գործող տարածքային կենտրոնների օրինակելի կանոնադրության վրա: Սոցիալական աշխատողների կարգավիճակի տեսանկյունից կարևոր են բաժիններ IV-ը, V-ը և VI-ը: Բաժին IV-ը հիմնականում վերաբերում է գործակալության պետի, իսկ բաժին VI-ը՝ այլ պաշտոնյաների իրավունքներին և պարտականություններին: Եվ բաժին IV-ից, VI-ից պարզ է, որ գործակալությունների / վարչությունների հիմնական աշխատանքը կապված է ընտանեկան նպաստի համակարգի հետ: Քիչ քան է ասվում

սոցիալական աջակցության այլ ուղղությունների մասին: Ճիշտ է, նշվում են այնպիսի աշխատանքներ, ինչպիսիք են տնային այցելությունները, իրավաբանական խորհրդատվության տրամադրումը և սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրերի մշակումը, սակայն բաժիններ IV-ում և VI-ում նախատեսվող աշխատանքների ընդհանուր թվում դրանք միայն մի փոքր մաս են կազմում: Այսպիսով, կանոնադրությունը վկայում է այն իրողության մասին, որ տարածքային կենտրոնների գործունեության գերակշռող մասը ուղղված է ընտանեկան նպաստների վարչարարմանը:

Կրթությունը

Սոցիալական աշխատանքի բնագավառում Երևանի պետական համալսարանն առաջարկում է մի շարք դասընթացներ: Դրանք են.

- 4-ամյա բակալավրիատ (դասընթացն անցկացվում է նաև 5-ամյա հեռակա ուսուցման տեսքով)
- 2-ամյա մագիստրատուրա
- 1 տարվա հեռակա ուսուցում
- Որակավորման բարձրացման ժամանակավոր դասընթացներ:

Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ֆակուլտետը կայուն զարգացում է ապրում սկսած 1992 թվականից, երբ ֆակուլտետի մի քանի դասախոսներ հնարավորություն ստացան մասնակցելու Լոնդոնի Տնտեսագիտության և քաղաքագիտության դպրոցում կազմակերպված վերապատրաստման դասընթացներին: Այժմ գործում է սոցիալական աշխատանքի առանձին բաժին, որը շարունակում է ընդլայնվել և փորձում է գտնել այն ուղիները, որոնց միջոցով բաժնի շրջանավարտների դիպլոմները կարող են ճանաչվել միջազգայնորեն: Բաժինը գործընկերական կապեր է հաստատել Կոննեկտիկուտի համալսարանի հետ: Բաժնի ոչ մի դասախոս չունի «PhD»-ի գիտական աստիճան սոցիալական աշխատանքի բնագավառում, սակայն բաժինը ցանկանում է ունենալ գիտական աստիճանի պաշտպանության խորհուրդ:

Ամեն տարի բակալավրիատն են ավարտում շուրջ 35-40 շրջանավարտ: Բաժինը աշխատում է մոտ 20 պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ՝ շրջանավարտներին մշտական աշխատանքի տեղավորելու ուղղությամբ: Բակալավրիատում սովորող ուսանողներն անցում են բոլոր առարկաները, ներառյալ սոցիալական աշխատանքի էթիկայի, երեխաների և տարեցների սոցիալական աշխատանքի առարկաները:

1-ամյա հեռակա ուսուցման դասընթացն անցկացվում է ինչպես Երևանում, այնպես էլ համալսարանի չորս մասնաճյուղերում (Գյումրի, Վանաձոր, Իջևան և Սիսիան): Ներկայումս յուրաքանչյուր մասնաճյուղ տալիս է 15-ից մինչև 25 շրջանավարտ: Ենթադրվում է, որ բաժինը մասնագետներ է պատրաստում պետական հատվածում աշխատանքի համար (և հատկապես հարմար է որպես ընտանեկան նպաստների գծով տեսուչ աշխատելու համար), սակայն պարզ չէ, թե արդյոք մե՞ծ են պետական հատվածի կազմակերպությունների կողմից ներկայացվող հայտերը, քանի որ դասընթացն անվճար է:

Որակավորման բարձրացման ժամանակավոր դասընթացների անցկացումը կախված է դոնորների ֆինանսավորումից: Օրինակ՝ 2003թ. «AED»-ին կազմակերպեց եռամսյա դասընթաց պետական կազմակերպությունների և ՀԿ-երի աշխատողների համար:

Բաժինը կցանկանար ավելի մեծ մասնակցություն ունենալ օրենսդրության մշակման գործընթացում, հնարավորություն ունենալ կարծիք ներկայացնել նախքան օրենքների ընդունումը: Բաժինը քննարկել է բարեփոխման հետ կապված հարցերը Գրետա Գրիգորյանի հետ (ԱՍՀՆ), և բաժնի աշխատակից Աննա Ոսկանյանը ներկայումս աշխատում է «Սոցիալական աջակցության մասին» օրենքի փոփոխությունների նախագծի վրա: Հարկ է նշել, որ այդ փոփոխությունները վերաբերում են սոցիալական աշխատանքի սահմանմանը:

ՄԾՏԿ-երի աշխատակիցները. սոցիալական աշխատանքի բնագավառում ուսուցում անցնելու պահանջը

Կուպիտ ասած, ներկայումս չի պահանջվում, որ ՄԾՏԿ-երի աշխատողներն ունենան որակավորումներ սոցիալական աշխատանքի ոլորտում: Սա համահունչ է այն իրողությանը, որ նրանց աշխատանքը գլխավորապես կապված է ընտանեկան նպաստների համակարգի իրականացման հետ: Համապատասխանաբար, ՄԾՏԿ-ում աշխատելու համար դիմող անձինք պետք է, ՄԾՏԿ-երի օրինակելի կանոնադրության համաձայն, ծանոթ լինեն ընտանեկան նպաստների մասին օրենսդրությանը և այլ հարակից իրավական ակտերին, սակայն պարտավոր չեն տիրապետելու բարձր հմտությունների սոցիալական աշխատանքի բնագավառում: Եվ քանի որ ՄԾՏԿ-ի միջին աշխատակցի աշխատավարձը բավականին ցածր է, դժվար կլինի հավաքագրել սոցիալական աշխատանքի որակավորումներ ունեցող նոր աշխատակիցներ:

Գործնականում ՄԾՏԿ-ի աշխատակիցներն իրենց անվանում են «սոցիալական աշխատողներ» այն պատճառով, որ օրենքի պահանջներն այդքան թույլ են: Օրենքի հոդված 32-ում նշվում է, որ «սոցիալական աշխատող կարող է լինել նաև այլ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող եւ «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ ուսուցման դասընթացներ ավարտած, համապատասխան փաստաթուղթ ստացած քաղաքացին, որն ունի սոցիալական ոլորտի աշխատանքի առնվազն մեկ տարվա փորձ»: Սա նշանակում է, որ ՄԾՏԿ-ի այն աշխատակիցը, որն ունի բարձրագույն կրթություն և ավարտել է դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող մեկ կամ երկու դասընթաց (օր.՝ 2003թ. անցկացված վերոնշյալ դասընթացը), համարվում է սոցիալական աշխատող:

Թեև տեսականորեն գերադասելի է , որ ՄԾՏԿ-ի աշխատակիցները տիրապետեն սոցիալական աշխատանքի նվազագույն հմտություններից բարձր ունակություններին (եթե ընդունենք, որ ի լրումն իրենց հիմնական խնդիրների, նրանք կատարում են նաև սոցիալական աշխատանքի որոշ գործառնություններ), սակայն առկա իրավիճակում դժվար կլինի կատարելագործել այդ հմտությունները դոնորների ֆինանսավորմամբ անցկացվող ուսուցումից բացի որևէ այլ դասընթացների միջոցով: Ինչպես արդեն նշվել է, անհավանական է, որ սոցիալական աշխատանքի բնագավառում բարձրագույն կրթություն ստացած շրջանավարտներն անցնեն աշխատանքի ՄԾՏԿ-երում, և անհավանական է, որ ՄԾՏԿ-երի առկա աշխատակիցները կունենան բավարար

դրամական միջոցներ, որպեսզի դիմեն հեռակա ուսուցման միամյա դասընթացին մասնակցելու համար: Ավելին, առկա կառուցվածքում պարզ չէ, թե արդյոք նման դիպլոմ ունեցող մասնագետը ինքնաստիճանային կունենա պաշտոնի բարձրացում, թե՞ ոչ, կամ արդյոք պաշտոնեական առաջխաղացումը կհանգեցնի՞ սոցիալական աշխատանքի գործունեության նշանակության բարձրացմանը:

Եթե պետական քաղաքականության շրջանակներում որոշվի, որ ՄՏՏԿ-երի դերը սոցիալական աշխատանքում պետք է բարձրանա, ապա խորհուրդ կտրվի վերակազմակերպել յուրաքանչյուր ՄՏՏԿ-ը, որտեղ, նպաստների հարցերով զբաղվող հիմնական թիմից բացի, կլինեն մեկ կամ երկու սոցիալական աշխատողներ: Անշուշտ, այս պարագայում կպահանջվի, որ սոցիալական աշխատանքի ծառայություններում աշխատելու համար հավաքագրվող մարդիկ ունենան անհրաժեշտ որակավորումներն ու հմտությունները: Հավաքանար անհրաժեշտ կլինի այս պահանջին համապատասխան ճշգրտել աշխատավարձի չափը, ինչպես նաև փոփոխություններ կատարել ՄՏՏԿ-երի օրինակելի կանոնադրություններում:

Եզրակացություններ և առաջարկություններ

Նպաստների հարցերով զբաղվող աշխատողներ և սոցիալական աշխատողներ. ՄՏՏԿ-եր

- Սոցիալական աջակցության իր քաղաքականություններում / ռազմավարությունում ԱԱՀՆ-ը պետք է ճանաչի, որ ոլորտը կգործի ավելի արդյունավետորեն, եթե ՄՏՏԿ-երն իրենց աշխատանքը կենտրոնացնեն դրամական նպաստների վարչարարության վրա, մինչդեռ սոցիալական աջակցության այլ ծառայությունների մատուցումը պայմանագրային հիմքով իրականացնեն մասնավոր հատվածի կազմակերպությունները:
- Ցանկացած դեպքում ՄՏՏԿ-երը չպետք է փորձեն մեկ աշխատակցի մեջ համադրել նպաստների հարցերով զբաղվող աշխատողի և սոցիալական աշխատանքի մասնագետի գործառույթները: Եթե ՄՏՏԿ-երը պետք է պահպանվի սոցիալական աշխատանքի գործառույթը, ապա ամեն մի ՄՏՏԿ-ում անհրաժեշտ է սահմանել առանձին պաշտոններ այս երկու մասնագիտությունների համար: Ինչևէ, ավելի իրատեսական լուծում կլինի սոցիալական աշխատանքի գործառույթի վերացումը՝ թողնելով, որ սոցիալական աշխատանքով զբաղվեն մասնագիտացված կազմակերպությունները, օրինակ՝ ՀԿ-երը:

Նպաստների հարցերով զբաղվող աշխատողները և սոցիալական աշխատողները. Օրենքը

- Օրենքում պետք է տարանջատում կատարվի սոցիալական աշխատանքի մասնագետների և նպաստների հարցերով զբաղվող աշխատողների միջև՝ համապատասխանաբար սահմանելով նրանց իրավունքներն ու պարտականությունները:
- Օրենքում կարող է տարանջատում կատարվել նաև սոցիալական աշխատանքի մասնագետների միջև աշխատանքի համապատասխան ուղղությունների սահմանման միջոցով, օրինակ՝ տարեցների և երեխաների հետ աշխատող սոցիալական աշխատանքի մասնագետներ:

Սոցիալական աշխատանքի մասնագետների կրթական մակարդակները

- Օրենքում նախատեսվող սոցիալական աշխատանքի մասնագետների որակավորման նվազագույն պահանջները պետք է աստիճանաբար խստացվեն: Սա, մասնավորապես, վերաբերում է սոցիալական ծառայողներին, որոնց նկատմամբ պետք է սահմանվեն ուսուցման տևողության և «սոցիալական ոլորտում» աշխատանքի տեսակի նվազագույն պահանջները: Անհրաժեշտ է նաև քննության առնել սոցիալական աշխատանքի մասնագետների համար որակավորման բարձրացման պարբերական դասընթացներ կազմակերպելու հարցը:
- Վերը նշվող ցանկացած նոր պահանջ պետք է ներդրվի աստիճանաբար, որպեսզի մասնագետները հնարավորություն ունենան հարմարվելու դրանց:

Էթիկայի կանոնները

- Անհրաժեշտ է հաստատել էթիկայի վերանայված կանոնները:

Լիցենզավորումը

- Առաջին առանձին սոցիալական աշխատողների լիցենզավորման մասին առաջարկություն չի արվում: Վիճահարույց է նաև նրանց գրանցման հարցը: Պետական ֆինանսավորման հաշվին սոցիալական աջակցության ծառայություններ մատուցող ՀԿ-երի / մասնավոր կազմակերպությունների լիցենզավորումը (օրինակ՝ 2007թ. հունվարի 18-ի ՀՀ Կառավարության որոշման համաձայն տարեցների և հաշմանդամների խնամք իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը) ողջամիտ կլինի:
- Սոցիալական աշխատանքի մասնագիտության զարգացման համար ժամանակ կպահանջվի: Այն մասամբ պայմանավորված կլինի ազգային ընկերակցության կայացմամբ, որն առաջատարի դեր կխաղա սոցիալական աշխատանքի ոլորտի նոր մասնակիցների համար ստանդարտների սահմանման և էթիկայի կանոնների հետ համապատասխանության հսկողության առումով:

Սոցիալ-հոգեբանական վերականգնողական օգնությունը

- Սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրի օրինակելի ձևի նախագիծը պետք է փոփոխվի՝ հաշվի առնելով սույնում նշվող առաջարկությունները: